հանգամանքի վրայ։ Բանը հաղորդուեց Կ. Պոլսի դեսպան-ներուն և Ազգային Պատրիարքարանին։

Անգլիոյ դեսպան Լորդ Դիւֆէրին հեռագրով հրահանգ տուեց Դէֆթըն Գլէյթընին անմիջապէս ուղևորուիլ Շէյխի մօտ և անձամբ ստուգել գործերի դրութիւնը Շամզոլինանում։

Իսկ Պ. Կամսարական (Ռուսաց կոնսիւլը) բաւական հա-մարեց քիւթիւկչի Սիմոն Զիլինկիրեանցին (որ այդ ժամանակ Տրապիզոնից հասել էր և Շամզոլինան էր գնում, ընկուզի ծառերի վրայ գտնուած ուռերը կտրելու գործով) յանձ-նարարել՝ խնդիրը ուսումնասիրելով մի տեղեկագիր կազմել և ուղարկել նրան։ Յօդուածագիրս էլ որ առևտրական գործեր ունենալով Բրդստան պէտք է գնայի, օգտուելով պատեհ առիթից՝ անդլիական հիւպատոսի ապահով կարաւանին միա-ցայ և մեկնեցինք Վանից։

Մենք տեղեկացանք որ իսկապէս Շէյխը զաղտնի հրա-հանգներ է ընել Պոլսից, և ինչ որ խուլ չչուկներ կային քրդական չրջաններում ի մօտոյ արշաւանքի նման մի բան սկսելու, բայց թէ ո՞ւմ վրայ, Հայոց, թէ Ասորւոց, դեռ չի որոշապէս յայտնուում։ Կոնսուլի հետ գնացինք Մար-Շիմօնի մօտ, մեծ եղաւ մեր զարմանքը երբ Մար-Շիմօնը յայտնեց որ Շէյխը նրան մի նամակով հրաւիրել էր մօտ օրերում իր մօտ տեսակցութեան և խորհրդակցութեան՝ մի չատ կարևոր գործի մասին՝ որին չուտով պէտք է ձեռնարկուէր բարձրագոյն հրա-մանով և հրահանգով։

Իսկ դուք ինչ պատասխանեցիք նրան հարցրեց հիւպա-տոսը Կաթուղիկոսից.— Ոչինչ, միայն այսչափ թէ՝ մենք հինգ մելիքներ ունենալով, որոնք կազմում են ազգային խնամա-կալութիւնը՝ հարկ է նախապէս դիմել նրանց՝ որպէս զի ժո-ղովի միջոցով որոշուի նրա մօտ գնալու խնդիրը։

... Կոնսուլին Մար-Շիմօնը պատասխանել է. ինձ համար բոլորովին պարզ է որ նա կը յարձակուի Վանի վրայ. Զալա-լէտտին և Ուլէյտուլլահ Պայազիտ գնալուց առաջ, ուխտել էին յաղթական վերադառնալիս պատերազմի դաշտից՝ Վանը